ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

28 հոկտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ջանիկ Ալավերդյանը, Անուշավան Ավետիսյանը, Սուսաննա Բաբայանը, Անի Ղազարյանը, Գնել Ղազարյանը, Գրիշա Ղազարյանը, Սեվակ Սամվելյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր՝ ը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 28-ը Հոկտեմբերի 2025 թվականի թիվ 14 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 28.10.2025թվականի թիվ 14 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ավագանու 08 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 130-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3. Արենի համայնքի Ելփին բնակավայրի մանկապատեզի կառուցման աշխատանքների համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

4. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելուն համաձայնություն տալու մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ
Մ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 139-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ավագանու 28 հոկտեմբերի 2025թվականի թիվ 130-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման 4-րդ մասի մեջ <<0017>> թիվը փոխարինել <<0040>> թվով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ
Մ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 140-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի Ելփին բնակավայրում կառուցվող մանկապարտեզի շինարարական աշխատանքները ավարտելու, կոյուղու մաքրման կայան և կոյուղագիծ կառուցելու նպատակով, լրացուցիչ 47 014 903 ՀՀ դրամ գումար հատկացնելուն:

2. Վերոնշյալ գումարից համայնքի վճարվելիք մասնաբաժինը՝ կազմում է 20 935 703 ՀՀ դրամ, ՀՀ կառավարության կողմից հատկացվելիք սուբվենցիայի մասնաբաժինը կազմում է 26 079 200 ՀՀ դրամ:

3. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին սահմանված կարգով լրամշակել և լիազոր մարմնին ներկայացնել նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ

Մ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 141-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ եկամտատեսակում ավելացնել 266 384 359 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել՝

1) ջրամատակարարում և կոյուղու համակարգեր գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5112/շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին՝ 42 781 968 ՀՀ դրամ,

2) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին՝ 160 913 768 ՀՀ դրամ,

3) Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին՝ 62 688 623 ՀՀ դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի շին. թույլտվություն, քանդման թույլտվություն 45 բաժնի 05 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 10 000 000 ՀՀ դրամ, նշված գումարն ուղղել կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին:

3. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածից պակասեցնել 21 միլիոն ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին:

4. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական դասակարգման 4891/պահուստային միջոցներ/հոդվածից կատարել հատկացում՝ 2 000 000 ՀՀ դրամ և այն ուղղել Արենի այլ մշակութային միջոցառումներ գործառնական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4269 /հատուկ նպատակային նյութեր/ հոդվածին:

5. Արենի այլ մշակութային միջոցառումներ գործառնական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4637 /ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածից պակասեցնել 75 000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել նույն ոլորտի 4727 /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ
Մ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 142-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0201հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիր՝ 10-036-0015-0009-ից, գործառնական նշանակություն՝ բնակելի կառուցապատման) լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատելու և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ
Մ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 143-Ա)*

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄՀԵՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ_______________

Նիստն արձանագրեց՝ _______________